Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑԻ

ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Մանե Արամի Մարկոսյանի «Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Գիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրների հետազոտությանը:

Ընդերքօգտագործման ոլորտն էական դեր ունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ձևավորման, զբաղվածության ապահովման, օտարերկրյա ներդրումների ներգրավման, ինչպես նաև տնտեսության զարգացման գործընթացում: Ընդերքօգտագործման ոլորտի զարգացումը կախված է, առաջին հերթին, ոլորտում ծագող հարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորումից, սակայն ներպետական օրենսդրության համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրությունն ունի էական բարեփոխումների անհրաժեշտություն: Մասնավորապես, ոլորտի իրավահարաբերությունները շարունակում են կարգավորվել վարչաիրավական

կառուցակարգերով, սակայն, ինչպես արդարացիորեն նշում է ատենախոսության հեղինակը, ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորման համար հավասարապես կարևոր է նաև քաղաքացիական իրավունքի նորմերի, ինստիտուտների և կարգավորման դիսպոզիտիվ մեթոդի կիրառման նշանակությունը, ինչը գործող օրենսդրությամբ անհարկի սահմանափակված է, որոշ դեպքերում՝ անտեսված: Պետք է ընդգծել, որ ներպետական իրավաբանական գրականության մեջ բացակայում են ատենախոսության թեմային նվիրված գիտական հետազոտությունները, իսկ առանձին գիտական հետազոտություններ կենտրոնացած են ընդերքօգտագործման ոլորտի մասնավոր բնույթի որոշ հարցերի ուսումնասիրության վրա: Ուստի, ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները հայրենական գրականության մեջ համալիր կերպով ուսումնասիրվում են առաջին անգամ:

Նշված համատեքստում խիստ կարևորվում է հեղինակի կողմից ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների քաղաքացիաիրավական կարգավիճակի, ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման շրջանակի, ընդերքօգտագործման իրավունքի ծագման, դադարման հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառման հիմնախնդիրների և առանձնահատկությունների, ընդերքօգտագործման պայմանագրի ինստիտուտի հետ կապված հիմնախնդիրների խորը և համակողմանի հետազոտությունը և վեր հանված տեսագործնական խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների ներկայացումը:

Շարադրվածը փաստում է Մանե Մարկոսյանի ընտրած թեմայի արդիականության և հրատապության մասին:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ, այն բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, որոնք ներառում են 7 պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը, ներկայացրել ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան,

ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը և ատենախոսության գիտական նորույթը:

Ատենախոսության 1-ին գլխում՝ «Ընդերքօգտագործման իրավունքի ընդհանուր բնութագիրը և քաղաքացիաիրավական կարգավորման ասպեկտները» վերտառությամբ, հեղինակն անդրադարձ է կատարել ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկություններին և տարրերին, այդ համատեքստում՝ ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման նշանակությանը, ուսումնասիրել և վերլուծել է ընդերքօգտագործման իրավունքի ծագման, դադարման գործընթացքում քաղաքացիական իրավունքի ինստիտուտների, նորմերի կիրառման հիմնախնդիրները, ինչպես նաև ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման առանձնահատկությունները և նորմատիվ կարգավորման առկա բացերը:

Հիմնվելով 1-ին գլխում կատարած վերլուծության վրա՝ հեղինակը ներկայացրել է մի շարք կարևոր առաջարկություններ և եզրակացություններ: Հիշատակման է արժանի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ընթացակարգի վերաբերյալ ատենախոսի կատարած վերլուծությունը և դրա լույսի ներքո ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ընթացակարգի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխով նախատեսված՝ պայմանագիրը փոփոխելու և լուծելու դրույթները կիրառելու վերաբերյալ առաջարկությունը: Նշված առաջարկը յուրովի գիտական մոտեցում է ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կառուցակարգերի կատարելագործման առումով: Առանձնակի կարևորություն և բարձր գիտական արժեք ունեն ընդերքօգտագործման պայմանագրի ինստիտուտին նվիրված հեղինակի վերլուծությունները և ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների նորմատիվ-իրավական կարգավորմանը նվիրված հեղինակի առաջարկները և եզրահանգումները:

Ատենախոսության 2-րդ գլխում՝ «Ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտների քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ, հեղինակը հետազոտության առարկա է դարձրել ընդերքը՝ որպես ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների ինքնատիպ օբյեկտ: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի հեղինակի եզրահանգումը՝ նվիրված «ընդերք» և «ընդերքի տեղամաս» եզրույթների հարաբերակցության հարցին: Մասնավորապես, կատարված վերլուծության արդյունքում հեղինակը եկել է այն եզրահանգման, որ ընդերքը և ընդերքի տեղամասերը քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ են, իսկ օրենսդրական մակարդակով ընդերքի տեղամասերի առանձնացումը կրում է իրավաբանական ֆիկցիայի բնույթ, որի նպատակն է ստեղծել բացառապես ընդերքօգտագործման նպատակներով պետության բացառիկ սեփականությունը հանդիսացող ընդերքը պայմանական մասերի բաժանելու և որպես անհատապես որոշվող անշարժ գույք ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման եղանակով քաղաքացիաիրավական շրջանառության մեջ դնելու իրավական հիմքեր: Հեղինակն առանձին անդրադարձել է նաև ընդերքի և դրա հետ կապված օբյեկտների՝ օգտակար հանածոների, հողամասի իրավական կարգավիճակների առանձնահատկություններին:

Ատենախոսության 2-րդ գլխի առանձին պարագրաֆներում հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկել նաև ընդերքօգտագործման իրավունքի քաղաքացիաիրավական շրջանառության առանձնահատկությունների վերաբերյալ գործող իրավակարգավորումները և օրենսդրական բացերը, ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ առավել խնդրահարույց իրավական ռեժիմ ունեցող քաղաքացիական իրավունքների օբյեկտների՝ ընդերքօգտագործման թափոնների, երկրաբանական տեղեկատվության իրավական կարգավիճակի առանձնահատկությունները և ներկայացրել ներպետական օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ, որոնք իրենցից գիտական նորույթ են ներկայացնում:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ հեղինակը կատարել է կարևոր գիտագործնական նշանակություն ունեցող եզրահանգումներ, մշակել է տեսական հասկացություններ և ներկայացրել օրենսդրական բարեփոխումների արժեքավոր առաջարկներ:

Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմային նվիրված համալիր և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով դիալեկտիկական, համեմատական-իրավական և գիտական այլ մեթոդներ: Հեղինակի կողմից ներկայացված նկատառումներն ու դիտարկումները շատ արժեքավոր են, և հաստատապես կարելի է փաստել, որ հեղինակը կարողացել է ներկայացնել գիտական պատշաճ մակարդակ ունեցող աշխատանք:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 8 գիտական հոդվածներում, ինչպես նաև ատենախոսության սեղմագրում:

Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲԿԳԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրված ատենախոսության վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում հեղինակը եզրակացնում է, որ ընդերքօգտագործման իրավունքի դադարման ընթացակարգը սահմանող՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածն ունի վերանայման անհրաժեշտություն, քանի որ, ի թիվս այլնի, չի երաշխավորում ընդերքօգտագործման պայմանագիրը կողմերի փոխադարձ համաձայնությամբ լուծելու քաղաքացիաիրավական կառուցակարգի իրացումը, խաթարում է ներդրողների շահերի պաշտպանությունը, ընդերքօգտագործման իրավունքի գործողության ողջ ժամկետի ընթացքում դրա նկատմամբ ընդերքօգտագործողի «լեգիտիմ ակնկալիքը»: Ըստ հեղինակի՝ նշված հոդվածը պետությանը հնարավորություն է տալիս ընդերքօգտագործողի ստանձնած ցանկացած պարտավորության խախտման դեպքում միակողմանի դադարեցնել ընդերքօգտագործման թույլտվությունը և որպես հետևանք՝ լուծել ընդերքօգտագործման պայմանագիրը, այն դեպքում, եթե ընդերքօգտագործողը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված ժամկետներում չի վերացրել պարտավորության խախտման մասին լիազոր մարմնի գրավոր զգուշացման կամ կոնկրետ տեսակի

պարտավորությունների խախտման դեպքում՝ ընդերքօգտագործման իրավունքի կասեցման հիմքերը: Արդյունքում, հեղինակն առաջարկում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածով սպառիչ թվարկել ընդերքօգտագործման թույլտվությունը պետության կողմից միակողմանի դադարեցնելու համար հիմք հանդիսացող պարտավորությունների խախտման շրջանակը՝ սահմանափակելով այն ընդերքօգտագործողի՝ հանրային իրավահարաբերության տարրեր պարունակող պարտավորությունների խախտումներով, իսկ ընդերքօգտագործողի՝ մասնավոր իրավահարաբերության տարրեր պարունակող պարտավորությունների խախտումների դեպքում՝ կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխով նախատեսված՝ պայմանագիրը փոփոխելու և լուծելու դրույթները:

Կարծում ենք, որ ներկայացված դրույթն արժեքավոր է ընդերքօգտագործման իրավունքի դադարման հիմքերի և ընթացակարգի վերաիմաստավորման և հստակեցման տեսանկյունից, սակայն հեղինակի կողմից առաջարկվող կարգավորման կառուցակարգն ունի լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն: Մեր կարծիքով, վիճելի է հեղինակի այն պնդումը, թե ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածը պետությանը հնարավորություն է տալիս ընդերքօգտագործողի կողմից ստանձնած «ցանկացած պարտավորության» խախտման դեպքում միակողմանի դադարեցնել ընդերքօգտագործման իրավունքը: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի կառուցվածքից բխում է, որ իրավունքի դադարեցումը կապված է ոչ միայն խախտման փաստի, այլև լիազոր մարմնի գրավոր զգուշացման, խախտումը վերացնելու համար օրենքով նախատեսված ժամկետի, իսկ որոշ դեպքերում՝ իրավունքի նախնական կասեցման հիմքերի չվերացման հետ:

2. Պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթում հեղինակը, ուսումնասիրելով ընդերքօգտագործման իրավունքի քաղաքացիաիրավական շրջանառության առանձնահատկությունները, եզրակացնում է, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 22-23-րդ հոդվածներով նախատեսված՝ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման կարգավորումները չեն լուծում այդ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ գույքը, գույքային իրավունքները նոր ընդերքօգտագործողին փոխանցելու հարցերը, ինչի արդյունքում սոսկ

ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը նոր ընդերքօգտագործողին կարող է դառնալ ոչ իրացվելի իրավունքի օտարում:

Մեր կարծիքով՝ հեղինակի առաջարկն ունի հստակեցման անհրաժեշտություն, քանի որ բավարար չափով պարզ չէ, թե հեղինակն ընդերքօգտագործման իրավունքի իրացման համար անհրաժեշտ կոնկրետ ո՞ր օբյեկտներն է առաջարկում դիտարկել ընդերքօգտագործման իրավունքի իրացման համար անհրաժեշտ զույքային համալիրի կազմում:

3. Աշխատանքի 1.3-րդ պարագրաֆում (էջեր 73-90) հեղինակը կատարել է ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման պայմանագրի նորմատիվ-իրավական կարգավորման հարցերի համալիր վերլուծություն՝ գալով եզրահանգում առ այն, որ ընդերքօգտագործման պայմանագիրը ներպետական օրենսդրական կարգավորումների պայմաններում չի կարելի համարել ինքնուրույն տեսակի պայմանագիր:

Գտնում ենք, որ ատենախոսությունն առավել կշահեր, եթե հեղինակը կատարեր նաև ընդերքօգտագործման պայմանագրի և քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում ընդերքօգտագործման պայմանագրին իրենց հատկանիշներով մոտ (օրինակ՝ կապալի, ծառայությունների մատուցման և այլն) պայմանագրերի իրավահամեմատական վերլուծություն:

Վերնշյալով հանդերձ, մեր գնահատմամբ՝ ներկայացված նկատառումները չեն ստվերում Մանե Մարկոսյանի կատարած աշխատանքի արժանիքները, գիտականությունը և կարևորությունը:

Մանե Մարկոսյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, ընդգծված արդիականությամբ և իր տեսագործնական բարձր արժեքով: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում հեղինակի ինքուրույն ձևակերպումներով և վերլուծություններով, իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ողջ վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Մանե Արամի Մարկոսյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը

համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, ուստի հեղինակն արժանի է ԺԲ.00.03 – մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍ՝
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ա. ՀԱՅԿՅԱՆՑ

«Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանցի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«10» հուլիսի 2026թ.